«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

ՄԱՅԻՍԻ 14, 1998 թվ. Թիվ 16

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՅԱՆ ԿԵԺՈՒՆ
ՀՀ-ՈՒՄ ՉԺՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Միջազգային իրադրությունում կատարվել են հսկայական փոփոխություններ: Քաղաքական, տնտեսական, և այլ ոլորտներում բազմաբևեռության տարածաշրջանային և համընդհանուր միտումը նոր զարգացում է ապրել, աշխարհում ընթանում է ուժերի նոր տեղաբաշխում և շերտավորում: Ժամանակակից աշխարհը դեռևս գտնվում է բարդ և խորքային փոփոխությունների վիճակում: Միջազգային իրավիճակը ընդհանուր առմամբ շարունակում է ընթանալ լիցքաթափման ուղով: Խաղաղությունն ու զարգացումը մեր դարաշրջանի ենթատեքստն են: Աճում են մեծ թվով զարգացող երկրների համախմբված ուժերը: Բազմաբևեռայնության միտումի զարգացումը նպաստում է միջազգային խաղաղությանը, համագործակցությանն ու ծաղկմանը: Խաղաղության, համագործակցության և զարգացման պահանջը դարձել է դարաշրջանի գլխավոր ուղղությունը: Անընդհատ մեծանում են ողջ աշխարհում խաղաղության պաշտպանության գործոնները: Հնարավոր է դարձել երկար ժամանակ խուսափել նոր համաշխարհային պատերազմից, իրական է խաղաղ միջազգային և շրջակա միջավայրի ապահովման հնարավորությունը:

> «Խաղաղության, համագործակցության և զարգացման պահանջը դարձել է դարաշրջանի գլխավոր ուղղությունը:»

Այսուհանդերձ, սառը պատերազմի աշխարհընկալումը դեռ պահպանվում է, խտրականությունն ու ուժի քաղաքականությունը շարունակում են մնալ միջազգային կայունության

ու խաղաղությանը վտանգող սպառնալիքի գլխավոր աղբյուրը: Ռազմական բլոկների ընդլայնումն ու ռազմական միությունների ամրապնդումը չի նպաստում խաղաղության պաշտպանության և անվտանգության ապահովմանը: Անարդար և ոչ բանական միջազգային հին տնտեսական կարգը ոտնահարում է զարգացող երկրների շահերը: Անընդհատ խորանում է աղքատության և հարստության միջև ճեղքվածքը: Դեռևս արձանագրվում են «մարդու իրավունքների» պատճառաբանությամբ այլ երկրների ներքին գործերին միջամտելու լուրջ դեպքեր: Տարբեր գործոնների ազդեցությամբ բռնկվում են տարածաշրջանային հակամարտություններ: Աշխարհը դեռևս հանգիստ չէ:

Չինաստանը իր դիրքորոշումն ու քաղաքականությունը, ինչպես նախկինում, ձևավորում է հաշվի առնելով այս կամ այն իրադարձության ստույգ բնույթը: Չինաստանը չի ձգտում այս կամ այն տերության, պետությունների խմբի հետ միություններ կազմել, չի ընդունում այն մոտեցումը, երբ որպես միջպետական հարաբերությունների գլխավոր չափանիշ են վերցվում գաղափարախոսությունը կամ հասարակական կարգը:

Միջազգային հարաբերություններում Չինաստանը որդեգրել է անկախ, ինքնուրույն, խաղաղ արտաքին քաղաքականություն:

«Չինաստանը անվերապահորեն հանդես է գալիս ընդդեմ սպառազինությունների մրցավազքի:»

Չինաստանի արտաքին քաղաքականության <u>հիմնարար դրույթները</u> հետևյալն են.

1. Բոլոր միջազգային հարցերում Չինաստանը անկախ և ինքնուրույն է ձևավորում իր դիրքորոշումն ու քաղաքական ուղին, հանդես է գալիս խտրականության և ուժի քաղաքականության դեմ:

2. Չինաստանի արտաքին քաղաքականության նպատակը աշխարհում խաղաղության պաշտպանությունն ու խաղաղ միջազգային իրավիճակի ստեղծումն է, ինչը կնպաստի երկրի արդիականացմանը: Վերջինիս համար Չինաստանին անհրաժեշտ է խաղաղ միջազգային իրավիճակ: Չինաստանի զարգացումը ոչ մի երկրի վտանգ չի սպառնում: Չինաստանը

Յան Կեժունը ծնվել է 1937թ. նոյեմբերին Չինաստանի Չյանսու նահանգում, ստացել է բարձրագույն կրթություն:
1961-1979թթ.-ին եղել է ՉԺՀ դիվանագիտական կորպուսի սպասարկման Պեկինի Վարչության չինարեն լեզվի քարտուղարը:
1979-1984թթ.-ին՝ ԽՍՀՄ-ում ՉԺՀ դեսպանատան երրորդ, այնուհետև երկրորդ քարտուղար:
1984-1985թթ.-ին՝ ՉԺՀ արտաքին գործերի նախարարության վարչության երկրորդ, այնուհետև առաջին քարտուղար:
1985-1988թթ.-ին ՉԺՀ-ի արտաքին գործերի նախարարության ԽՍՀՄ-ի և արևելյան Եվրոպայի երկրների դեպարտամենտի առաջին քարտուղար և վարիչի տեղակալ:
1988-1991թթ.-ին ԽՍՀՄ-ում ՉԺՀ դեսպանատան առաջին քարտուղար և խորհրդատու:
1991-1992թթ.-ին Ռուսաստանի Դաշնության դեսպանատան խորհրդատու:
1992-1994թթ.-ին Թուրքմենստանում ՉԺՀ դեսպանատան խորհրդատու:
1994-1995թթ.-ն ՉԺՀ Գերագույն Խորհրդի արտասահմանյան գործերի գրասենյակի պետի տեղակալ:
1995-առայսօր Հայաստանի Հանրապետությունում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան:

երբեք չի ձգտի առաջնայնության, եթե անգամ դառնա զարգացած: Չին ժողովուրդը, որը երկար ժամանակ տառապել է օտարերկրյա զավթիչներից, շահագործումից ու ստորացումից, երբեք համանման տառապանքներ չի պատճառի ուրիշներին:

3. Չինաստանը ցանկանում է բոլոր երկրների հետ իր հարաբերությունները զարգացնել հիմնվելով խաղաղ գոյակցության հինգ սկզբունքների վրա: Դրանք են. ինքիշխանության և տարածքային ամբողջականության փոխադարձ հարգանքը, փոխադարձ չհարձակվելը, մեկը մյուսի ներքին գործերին չխառնվելը, հավասարությունն ու փոխշահավետությունը, խաղաղ գոյակցությունը:

4. Զարգացող երկրների հետ համերաշխության և համագործակցության ամրապնդում, բարիդրացիական բարեկամական հարաբերությունների զարգացում հարևան երկրների հետ՝ սա է Չինաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարը:

5. Չինաստանը հանդես է գալիս միջազգային հարաբերությունների համակարգի և նոր միջազգային քաղաքականության ու տնտեսական կարգի ստեղծման օգտին՝ հիմնված խաղաղ գոյակցության հինգ սկզբունքներին:

Մենք գտնում ենք, որ պետությունների միջև ծագած վեճերն ու հակամարտությունները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով՝ խորհրդակցությունների հիման վրա, չի կարելի դիմել զենքի ուժին կամ այն կիրառելու փաստարկներին, չի կարելի որևէ պատճառով միջամտել այլ երկրների ներքին գործերին, առավել ևս՝ հեղվել ուժի վրա, նեղել թույլերին, ներխուժել այլ երկրներ, դրանց ստորացնել ու բզկտել:

Մենք մեր գաղափարախոսությունն ու հասարակական կառուցվածքը ոչ մեկի չենք պարտադրում, բայց և ոչ մի դեպքում թույլ չենք տա այլ երկրներին մեզ պարտադրել իրենց հասարակական կարգն ու գաղափարախոսությունը: Յուրաքանչյուր երկիր իրավունք ունի ընտրել իր հասարակական կարգը, զարգացման ռազմավարությունն ու կյանքի կերպը՝ իր սեփական իրողություններին համապատասխան: Այս կամ այն երկրի գործերը պետք է լուծվեն նրա ժողովրդի կողմից, իսկ միջազգային գործերը՝ բոլոր երկրների միջև անկցկացվող խորհրդակցությունների միջոցով: Չինաստանը գտնում է, որ բոլոր երկրները, անկախ նրանց մեծությունից և հզորությունից, համագործակցության իրավահավասար անդամներ են:

> «Յուրաքանչյուր երկիր իրավունք ունի ընտրել իր հասարակական կարգը:»

Չինաստանը անվերապահորեն հանդես է գալիս ընդդեմ սպառազինությունների մրցավազքի՝ հանուն իրական զինաթափման: Մենք գտնում ենք, որ այն երկրները, որոնք տնօրինում են աշխարհի միջուկային զինանոցի մեծ մասը, պետք է իրենց վրա վերցնեն սպառազինությունների վերահսկման հատուկ պատասխանատվություն: Չինաստանը հանդես է գալիս հանուն միջուկային զենքի լրիվ արգելման և վերջնական ոչնչացման, այն միջուկային երկրներին առաջարկում է կնքել առաջինը միջուկային զենքի չօգտագործման, նման զենքի օգտագործման արգելման կամ ոչ միջուկային երկրների և տարածաշրջանների դեմ դրանց օգտագործման արգելման մասին համաձայնագիր: Ռուսական թվականներին Չինաստանը միակողմանիորեն

իր բանակը կրճատեց մեկ միլիոն զինվորով, իսկ անցյալ տարի Չինաստանի կառավարությունը հայտարարեց, որ առաջիկա երեք տարիներին մեր բանակը կրճատվելու է ևս կես միլիոնով: Չինաստանում ազգային պաշտպանության ծախսերը միշտ մնում են նվազագույն մակարդակի վրա՝ այն անհրաժեշտի, որ հարկավոր է երկրի անվտանգության ապահովման համար: Պաշտպանությանը հատկացվող ծախսերը էապես փոքր են՝ համեմատած այլ երկրների հետ:

«Չինաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև գոյություն ունի ավանդական բարեկամություն:»

Հարգելի հայ բարեկամներ, օգտվելով այս առիթից, կուզեի ներկայացնել այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մեր սկզբունքները: Աշխարհում գոյություն ունի միայն մեկ Չինաստան: Թայվանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության անքակտելի մասն է: ՉԺՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատող ցանկացած երկրի կառավարություն պետք է աներկբայորեն դադարեցնի ցանկացած դիվանագիտական հարաբերություն Թայվանի ադմինիստրացիայի հետ և ՉԺՀ կառավարությանը ճանաչի որպես Չինաստանի միակ օրինական կառավարություն: Չինաստանի կառավարությունը կտրականապես չի հաշտվի որևէ երկրի խոռվարարների հետ, որոնք ձգտում են ստեղծել «երկու Չինաստան» կամ «մեկ Չինաստան և մեկ Թայվան», կտրականապես չի հաշտվի այն բանի հետ, որ ՉԺՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկիրը որևէ կարգի պաշտոնական հարաբերություններ հաստատի Թայվանի ադմինիստրացիայի հետ: Վերոհիշյալ սկզբունքների հիման վրա Չինաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել ավելի քան 160 երկրների հետ:

Չինաստանի հզորության կայացումը և զարգացումը իր ներդնումն է ունենում մարդկության առաջընթացի ապահովման, աշխարհում խաղաղության պաշտպանության գործում: Չինաստանը ոչ մեկի համար վտանգ չի ներկայացնում: Չինաստանը կարևոր ուժ է աշխարհում խաղաղության պաշտպանության և տարածաշրջանային կայունության ապահովման համար: Չին ժողովուրդը պատրաստ է բոլոր երկրների ժողովուրդների հետ միասին և, իհարկե, հայ ժողովրդի հետ միասին, իր նպաստը բերել, որպեսզի աշխարհը դառնա էլ ավելի հրաշալի:

Որպես Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան, կուզեի հատկապես կանգ առնել հայ-չինական հարաբերությունների վրա: Չինաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև գոյություն ունի ավանդական բարեկամություն, որն իր արմատներով գնում է դեպի հեռավոր անցյալը: Չինաստանը առաջին երկրներից մեկն է, որ ճանաչել է Հայաստանի անկախությունը: 1992 թվականի ապրիլի 6-ին մեր երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Մենք բավարարված ենք նրանով, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո անցած վեց տարիների ընթացքում մեր երկրների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունները բարեհաջող զարգացել են: Մեր երկրների միջև ստորագրվել են տարբեր ոլորտներին առընչվող մի շարք համաձայնագրեր, դրանով իսկ դրվել է մեր հարաբերությունների զարգացման համար իրավական հիմքը: Չինաստանի և Հայաստանի միջև շատ ընդհանուր բան կա՝ հնագույն մշակույթը, դարավոր պատմությունը և քաղաքակրթությունը, մեր երկու ժողովուրդներն էլ աշխատասեր են և խաղաղասեր: Մեր երկու երկրների միջև գոյություն չունի քաղաքական խոչընդոտ, որը խանգարի մեր հարաբերությունների զարգացմանը: Հայ

ժողովուրդը բարեկամական զգացմունքներ է տածում չին ժողովրդի հանդեպ, չինացիները նույնպիսի զգացմունքներ ունեն հայ ժողովրդի նկատմամբ: Չինաստանը սատարում է հայ ժողովրդի ջանքերին, որոնք ուղղված են իր երկրի անկախության պաշտպանությանն ու տնտեսության զարգացմանը:

Ես հաստատապես համոզված եմ, որ համատեղ ջանքերի դեպքում Չինաստանի և Հայաստանի միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունները հետագայում ևս անընդհատ կզարգանան:

Հարցեր և պատասխաններ

-Աշխարհում կա՞ն արդյոք տարածաշրջաններ, որոնց նկատմամբ Չինաստանը հատուկ հետաքրքրություններ ունի:

-Չինաստանը միշտ հանդես է գալիս աշխարհում կայունության և խաղաղության պահպանման օգտին: Մենք կցանկանայինք տեսնել ողջ աշխարհի կայունությունն ու բարգավաճումը: Չինաստանը ոչ մի դեպքում շահադիտական նպատակներ չի հետապնդում: Այդպիսին է մեր քաղաքականությունը:

-Ձեր գնահատմամբ, որքանո՞վ է օգտագործվում հայ-չինական տնտեսական ներուժը:

-Ըստ իս, հայ-չինական տնտեսական հարաբերությունների ներուժը մեծ է: Հարկ է միայն, որ երկու կողմերն էլ համատեղ ջանքեր թափեն, միակողմ աշխուժությունը ոչինչ չի տա:

-Ո՞րն է Չինաստանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ:

-Մենք հանդես ենք գալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ բացառապես խաղաղ բանակցությունների ճանապարհով լուծման օգտին: Բանակցություններով պետք է գտնել այնպիսի լուծում, որն ընդունելի լինի հակամարտող կողմերից յուրաքանչյուրի համար:

-Ի՞նչ նշանակություն ունեն Չինաստանի համար ազատ տնտեսական գոտիները՝ երկիրը արտաքին աշխարհի առջև բացելու առումով:

-Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը Դեն Սեաոպինի գաղափարն էր: Այս տարի կլրանա Չինաստանի տնտեսական բարեփոխումների քսան տարին: Այդ ընթացքում Չինաստանի կերպարը անճանաչելիորեն փոխվել է:

Հինգ ազատ տնտեսական գոտիներից զատ, մենք ունենք գոտիներ՝ գիտության զարգացման համար: Այստեղ ևս արտասահմանյան ներդրողների համար ստեղծված են արտոնյալ պայմաններ:

-Ո՞րոնք են Չինաստանի քաղաքականությունն ու տնտեսական առաջնահերթությունները Կովկասյան տարածաշրջանում:

-Արդեն նշեցի, որ մենք հանդես ենք գալիս հակամարտությունների՝ խաղաղ ճանապարհով լուծման օգտին: Այն վերաբերում է նաև Կովկասյան տարածաշրջանին: Մենք խրախուսում ենք տնտեսական զարգացումն ու համագործակցությունը՝ փոխշահավետ սկզբունքով:

-Օգնու՞մ են արդյոք, այս կամ այն կերպ, արտաքին ուժերը Չինաստանի զարգացմանը:

-Մեր ներքին խնդիրները պետք է լուծվեն մեր՝ չին ժողովրդի ուժերով: Ինչ խոսք, Չինաստանի արտաքին կապերը օգնում են մեզ: Բերեմ մեկ թվային օրինակ: Չինաստանը մինչ այժմ օգտագործել է շուրջ երկու հարյուր միլիարդ ամերիկյան դոլարի չափով միջազգային ներդրումներ: Այստեղից արդեն կարելի է հետևություններ անել, թե ի՞նչ դեր են խաղում արտասահմանյան ներդրումները Չինաստանի տնտեսությունում: Մենք լավ պայմաններ ենք ստեղծում, տալիս ենք արտոնյալ պայմաններ՝ արտասահմանյան ներդրումներ ներգրավելու համար:

-Ինչպե՞ս է գնահատում Չինաստանը միջազգային հարաբերություններում ԱՄՆ դերի մեծացումը:

-Յունիսի վերջին ԱՄՆ նախագահ Քլինթոնը պաշտոնական այցով ժամանելու է Չինաստան, այժմ ընթանում են աշխույժ նախապատրաստական աշխատանքներ: Անցյալ տարի ՉԺՀ նախագահը պաշտոնական այցով եղավ ԱՄՆ-ում: Ինչ խոսք, այդ այցով լավանում են չին-ամերիկյան հարաբերությունները: Վերջինիս զարգացումը, ըստ իս, բխում է չին և ամերիկացի ժողովուրդների արմատական շահերից, ինչպես նաև նպաստում է կայունության ու խաղաղության ամրապնդմանը ողջ աշխարհում: Չինաստանն ու ԱՄՆ-ն մեծ երկրներ են և ունեն ընդհանուր շահեր՝ ողջ աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման, տնտեսության զարգացման և ծաղկման, շրջակա միջավայրի պահպանության հարցերում: Սակայն, չին-ամերիկյան հարաբերությունների զարգացման համար հիմնարար հարցերից է Թայվանի խնդիրը: Եթե այս հարցում ծագեն դժվարություններ, ապա դժվար կլինի զարգացնել չին-ամերիկյան հարաբերությունները: Թայվանի հարցը պետք է ճիշտ լուծում ստանա: Պետք է խստորեն պահպանվեն Չինաստանի և ԱՄՆ միջև ստորագրված երեք հռչակագրերը: Պետք է առաջնորդվել փոխադարձ հարգանքի սկզբունքով, համախմբման տանել հավասարության հիմքի վրա և տարածայնությունների առկայության դեպքում գտնել ընդհանուրը:

-Ինչպե՞ս կազդի համընդհանուր խաղաղության և անվտանգության վրա ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնումը:

-Այս կամ այն ռազմական միությունների ընդլայնումը ոչ մի օգուտ չի բերում խաղաղության և կայունության ամրապնդման համար:

-Ինչպիսի՞ն է Չինաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ՝ կապված ույգուրների հիմնախնդրի հետ:

-Դա շատ զգայուն հարց է: Թուրքիայի և Չինաստանի միջև կան, կարելի է ասել, լավ հարաբերություններ: Մենք թույլ չենք տա, որ այլ երկրները խառնվեն Չինաստանի ներքին գործերին: Թուրքիայի ղեկավարները քանիցս պաշտոնապես հայտարարել են, որ բարձր են գնահատում չին-թուրքական հարաբերությունները և չեն խառնվում Չինաստանի ներքին գործերին:

-Ի՞նչ վերաբերմունք ունի Չինաստանը 1915 թվականին Թուրքիայի տարածքում իրականացված հայերի ցեղասպանության առնչությամբ:

-Ցեղասպանությունը՝ դա հանցագործություն է: Չինաստանը ևս ստորագրել է ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթերը, այդ թվում՝ վերջերս ժնևում՝ ՄԱԿ-ի շրջանակներում Հայաստանի նախաձեռնությամբ ընդունված բանաձևը:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԸ

ներկայացնում է

«Միջազգային հարաբերությունների արդի զարգացումները և նրանց ազդեցությունը Կովկասյան տարածաշրջանի և Հայաստանի վրա»

Մայիսի 21-ին, ժամը 18:30

Հայաստանի ամերիկյան համալսարանի
մեծ դահլիճում

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures.htm

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝